

## Կիպրահայ

### ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ԻՏԱԼԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԵԿՈՑ

Համագործակցութեամբ «Գալայճեան Հիմնարկին», Կիպրոսի Սիմֆոնիք Նուագախումբը Հոգեպարար Համերգ մը կազմակերպած էր՝ Ուրբաթ, 12 Ապրիլ, 2013-ին, երեկոյեան ժամը 8:30-ին, Սթրովոլոսի քաղաքապետարանի դահլիճին մէջ, մասնակցութեամբ ի մասնաւորի՝ Հայաստանէն յատկապէս հրաւիրուած Նուագախումբի ղեկավար Մաեստրօ Վարդան Յակոբեանի, ինչպէս նաեւ մենակատարներ՝ Սոփրանօ Սոնա Կարկալոյեանի եւ Պարիթոն Ալէքս Մոսկոֆեանի: Համերգը նուիրուած էր հայկական եւ իտալական երաժշտութեան, հետեւեալ բանաձեւումով. «Հայաստանը կը հանդիպի Իտալիոյ՝ երաժշտական ճամբորդութեան մը ընդմէջէն, ուր կը հնչեն Պապաճանեանի,

Չուխաճեանի, Տիգրանեանի, Վերտիի, Տոննիզեթթիի եւ Մասքանէիի հոշակաւոր երկերը, արիաները եւ երգերը...»:



Վերտիի օփերաներու շարքէն՝ La Forze del Destino-ի մէկ հատուածի համադրանքը կատարումէն ետք, յայտագրի առաջին մասը ամբողջովին յատկացուեցաւ հայկական երաժշտութեան փունջ մը ընտիր երկերու մատուցման: Յաջորդաբար հնչեցին Արմէն Տիգրանեանի ազգայնաշունչ «Անոյշ» Օփերայէն՝ ողբերգական սիրոյ յուզաթաթաւ

երանգներ արտայայտող «Ասում են ուռին աղջիկ էր ինձ պէս» սիրուած երգը, Տիգրան Չուխաճեանի «Արշակ Բ.» Օփերայէն հոգեթով արիաներ, Առնօ Պապաճանեանի լայն ժողովրդականութիւն շահած՝ «Առաջին սիրոյ Երգ»ը եւ «Երեւանի Սիրուն Աղջիկ»ը, մթնոլորտը ընծայելով խորապէս հայաշունչ ու հայատրոփ:

Սիմֆոնիք Նուագախումբը բարձր հմտութեամբ ղեկավարեց Մաեստրօ Վարդան Յակոբեան, ապահովելով կատարումներու առինքնող ներդաշնակութիւնը եւ հարազատութիւնը հրամցուած երկերու ոգիին ու շունչին: Մենակատարներ Սոնա Կարկալոյեան(Սոփրանօ) եւ Ալէքս Մոսկոֆեան (Պարիթոն) իրենց կատարած երգերով հարազատօրէն փոխանցեցին հանդիսականներուն՝ ներկայացուած երկին շունչն ու ոգին, ապրումներն ու յուզական շեշտը: Առանձին գնահատանքի է արժանի Սոնա Կարկալոյեան, որ արդէն յայտնի անուն է Կիպրոսի երաժշտական շրջանակներէն ներս եւ ինչպէս կը գրէ տեղական թերթերէն՝ Cyprus Mail-ը, անոր ձայնը զօրեղ է, հարուստ, ան օժտուած է իր երգանիշներուն եւ նրբերանգներուն վրայ տիրապետելու գերազանց թեքնիք կարողութեամբ: Ան ճշմարիտ արուեստագէտ է:



Երկրորդ մասի աւարտին ալ, որ ամբողջութեամբ նուիրուած էր Վերտիի, Մասքանէի եւ Տոննիզեթիի յայտնի Օփերաներէն հատուածներու կատարման, հանդիսականներու բուռն եւ երկարատեւ ծափահարութեանց ընդառաջելով, Նուագախումբը՝ անխոնջ եւ բարձրահմուտ խմբավարութեամբը Մանետրոյին, կատարեց Առնօ Պապաճանեանի ոգեշունչ «Ազգ Փառապանծ», «Արեգակին Պէտք է Հեռուից Նայել» եւ այլ երգեր, հիացնելով եւ լիացնելով ներկաները:



Հոգեւոր-մշակութային սովի մեր օրերուն, երբ մարդ արարածը գերազանցօրէն մտահոգուած է տնտեսական-ֆինանսական ճգնաժամին առթած խնդիրներով, այս Երեկոն՝ իր երաժշտական սրտագրաւ հնչիւններով եւ արուեստի բարձր որակով ու մակարդակով, սիրտեր ջերմացուց, թոյլց

տուաւ հոգիներուն, սլացք միտքերուն դէպի ազգային ու մարդկային էութեան խորախորհուրդ ոլորտները....., անգամ մը եւս հաստատելով այն անհերքելի ճշմարտութիւնը, թէ՛ «ՈՉ ՄԻԱՅՆ ՀԱՅԻԻ ԿԵՅՅԷ ՄԱՐԴ»:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

## Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Վարչապետ ԱՐԱ ՅԱՐՈՒԹԻՆԵԱՆ Նարեկ վարժարանէն ներս



Երեքշաբթի Մարտ 26, 2013-ին, առաւօտեան ժամը 11:00-ին, Նիկոսիոյ Նարեկ Վարժարան այցելեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան Վարչապետ, Վսեմաշուք Արա Յարութիւնեան, պատուիրակութեան մը ընկերակցութեամբ: Վարժարանի մուտքին, ան դիմաւորուեցաւ Նարեկ վարժարաններու Հոգաբարձութեան անդամներուն եւ Տնօրէնութեան կողմէ, ապա ան ուղղուեցաւ հանդիսասրահ, ուր ծափողոյններով դիմաւորուեցաւ

աշակերտութեան, ուսուցչական կազմին եւ պաշտօնէութեան կողմէ:



Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան քայլերգի ունկնդրումէն ետք, բարեգալուստի ջերմ խօսք արտասանեց Հոգաբարձութեան Ատենապետ Վարդան Թաշճեան, թարգմանը հանդիսանալով Նարեկի մեծ ընտանիքին հպարտութեան եւ հրճուանքի զգացումներուն այս բարեբաստիկ այցելութեան առիթով: Տնօրէնուհի Վերա Թահմազեան նոյնպէս սրտի խօսք արտասանեց,

շեշտելով յատկապէս՝ «Դուք ձեր հետ բերած էք յաղթական ու հերոսական Արցախի շունչն ու ոգին, որոնք մեր մէջ կ'ամրապնդեն ազգային պատկանելիութեան հպարտութիւնն ու պարծանքը, կը ոգեւորեն եւ կը ոգեզինեն մեզ»:

Այնուհետեւ, բեմ հրաւիրուեցաւ Տիար Արա Յարութիւնեան, իր խօսքը ուղղելու



աշակերտութեան: Աշակերտութեան մատչելի, պարզ լեզուով՝ ան բացատրեց, թէ ի՞նչ կը նշանակեն Արցախն ու Հայաստանը...Արցախեան յաղթանակը, զայն առաւել զօրացնելու հրամայականը...: Ան ընդգծեց, որ մատղաշ սերունդը՝ սփիւռքի մէջ, պարտի կապուիլ հայրենիքին, եւ ապագային օգտակար ըլլալ անոր: Իսկ հայ դպրոցն ու եկեղեցին, նշեց ան, հայակերտումի, հայր հայ պահելու օճախներ են: Յարգելի վարչապետը գնահատանք յայտնեց Կիպրոսի կառավարութեան, որ զօրավիգ է հայ դպրոցին, ազգային մեր կառոյցներուն, հայապահպանման մեր ձգտումին: Ապա ան դպրոցին նուիրեց Արցախի աթլասը, որպէսզի հայ աշակերտը մօտէն ծանօթանայ Արցախեան հայրենիքին եւ հոգեւին կապուի անոր:



Բարձրագոյն դասարանէն սանի մը բարեհունչ եւ անթերի արտասանութենէն ետք, Նարեկի աշակերտութենէն խումբ մը տղաք ու աղջիկներ ապրումով եւ յստակ առողջանութեամբ ներկայացուցին ազգային-հայրենասիրական ասմունք մը, զոր գեղեցկօրէն համադրած էր

հայագիտութեան ժրաջան ուսուցչուհի Տիկ. Մակի Էսկիճեան: Ասոր յաջորդեց հայկական պար, կատարողութեամբ վարժարանի պարախումբին: Այս տպաւորիչ ընդունելութիւն-հանդիսութեան աւարտին, ելոյթ ունեցաւ վարժարանի երգչախումբը, կատարելով՝ «Հայերէն Երգենք» եւ «Արդեօք Ո՞վքեր են» երգերը, ոգեւորութեամբ եւ հայրենասիրական ապրումով:



Վստահաբար, պատմական այս օրը անջնջելի կերպով դրոշմուած պիտի մնայ Նարեկի աշակերտութեան մատողաշ միտքերուն մէջ եւ ազգային արդար հպարտութեամբ պիտի ոգեզինէ զայն...:

ԱԶԱՏ ԽՕՍՔ

## ՄԱՅՐԸ ԴԷՍ ՅԱՆԴԻՄԱՆ ԴՊՐՈՑԻՆ, ՄՇԱԿՈՅԹԻՆ ԵՒ ՆՈՐ ՄԱՐՏԱՀՐԱՒԷՐՆԵՐՈՒ



Ստորեւ կը ներկայացնենք Նարեկ Վարժարաններու Տնօրէնուհի Տիկ. ՎԵՐԱ ԹԱՀՄԱԶԵԱՆԻ խօսքը արտասանուած Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ, յաւարտ Հսկումի արարողութեան՝ Մարտ 22-ին, ընթացիկ տարին Արամ Ա. Վեհափառ Հայրապետին կողմէ «ՀԱՅ ՄՕՐ ՏԱՐԻ» հոջակուելուն առթիւ:

Անգամ մը եւս պատին ունիմ գտնուելու այս մտերմիկ միջավայրին մէջ, թեմիս առաջնորդ Վարուժան Արքեպիսկոպոսի նախաձեռնութեամբ, հայ մօր տարուայ առթիւ կազմակերպուած դասախօսական

շարքին, գրուցելու հայ մօր դերին մասին. յատկապէս՝ դպրոցին, մշակոյթին եւ նոր մարտահրաւերներու դէմ յանդիման:

Միբելի ներկաներ, սիրելի մայրեր.

Մայր բառը հաւանաբար այն հազուագիտ բառերէն մէկն է, որ կ'արթնցնէ տեսակաւոր զգացումներ՝ գրեթէ ամէն մարդու սրտին մէջ - սէր, գուրգուրանք, հանգստութիւն, ապահովութիւն, ջերմութիւն, ժպիտ, խաղաղութիւն, միեւնոյն ատեն՝ խստութիւն, սահմաններ, արգիլում..... ցանկը երկար է..... : Մայրը այն բացառիկ արարածն է, որուն շնորհուած է բնագոյաբար գուրգուրալու յատկութիւն, հանգստութիւն ներշնչելու կարողութիւն, անսակարկ սիրելու յատկանիշ:

Մայրութիւնը կոչում է. Առաքելութիւն մը, որ թեպէտ կարելի չէ սորվիլ կամ սորվեցնել, սակայն աշխարհի մէջ ամենուրեք, մայրութեան հասկացողութիւնը կը մնայ միեւնոյնը եւ դարերու ընթացքին գրեթէ անփոփոխ: Իւրաքանչիւր մայր, մայրութեան իսկական իմաստը կը սորվի իր անձնական փորձառութենէն:



Վեհափառ հայրապետը իր խօսքին մէջ կը շեշտէ հայ մօր դերը եւ պարտաւորութիւնը մարդակերտումի ու հայակերտումի առաքելութեան գծով, նկատի առնելով անոր իւրայատուկ դերակատարութիւնը իր զաւկի կեանքին ամէն մէկ հանգրուանին:

Յաճախ կ'ըսուի որ մայրը մանուկին առաջին դպրոցն է, առաջին դաստիարակը, կեանքի առաջնորդը.....

Տիզիբական խնամքին կողքին, մայրը ինքզինք պատասխանատու կը զգայ իր զաւկին նկարագրի եւ անհատականութեան կազմաւորման, դատողութեան զարգացման, բարոյական արժէքներու մշակման մէջ, սորվեցնելով տարբերութիւնը լաւին ու գէշին, բարիին ու չարին, ճիշդին ու սխալին միջեւ:

Մայրը կը ստանձնէ երեխային դաստիարակութեան եւ կրթութեան հսկայ եւ պատասխանատու պարտականութիւնը: Երբեք մարտահրաւերներու դէմ յանդիման զաւով՝ երեխայի տարիքի իւրաքանչիւր հանգրուանին:

Շատ փոքր տարիքի մանուկի մայրը, իր վարուելակերպով եւ խօսակցութեամբ անմիջական ազդեցութիւն կ'ունենայ իր զաւկին վրայ, որովհետեւ մանուկը ինքնաբերաբար կ'ընդօրինակէ իր մօր շարժումները, կը կապկէ անոր դէմքի արտայայտութիւնները, խնդուքը եւ խօսակցական ոճը: Այս պատճառաւ ալ մասնագէտներ կը թելադրեն, որ մայրը ուշադիր ըլլայ իր վարուելակերպին եւ խօսակցական ոճին: Մանուկին պէտք է խօսիլ յստակ ոճով եւ չքաջալերել զայն մանկական, յաճախ ականջին հաճելի թուացող, սխալներ կրկնելու:

Հայ մայրը իր զաւկի կեանքին այս կարեւոր հանգրուանին պէտք է իր զաւկին հետ խօսի հայերէն լեզուով, առանց օտար բառեր օգտագործելու: Երբ տան մէջ ծնողքը կը խօսի հայերէն, կը կարդայ հայերէն գիրք եւ թերթ, կը հետեւի հայկական հեռուստակայաններու, կը յաճախէ հայկական մշակութային կեդրոններ, ինքնաբերաբար երեխան փոքր տարիքէն կը հետեւի իր ծնողքին օրինակին եւ ինքզինք հարագատ կը զգայ հայերէնին ու հայկականին:

Երբ կը հասնի մանուկին մանկապարտէզ յաճախելու ժամանակը, հայ մայրը կը գտնուի իր զաւկին ապագան բնորոշող խիստ կարեւոր որոշումի մը դէմ յանդիման: Որոշում մը, որ սխալ ընտրութեան պարագային՝ դժուար կը սրբագրուի: Կ'ականարկեմ դպրոցի ընտրանքի որոշումին: Երբ հայ փոքրիկը կ'առաջնորդուի դէպի հայկական վարժարանի սենը, արդէն իսկ հիմնաքարը դրուած կ'ըլլայ իր հայ նկարագրի կերտումի ճիգին: Մայր մը որ կը փափաքի իր զաւակը մեծցնել իբր լաւ հայ եւ նոյն ատեն իբր լաւ քաղաքացի՝ օտար երկրի մէջ գոր կը համարէ իր երկրորդ հայրենիքը, պարտի զայն առաջնորդել դէպի հայկական վարժարան: Հոն՝ մանուկը, օտար լեզուներու կողքին, պատշաճ կարեւորութիւն տալով հայերէնին, կը սորվի գրել ու կարդալ իր մայրենին, կը սորվի մտածել հայերէնով եւ ինքզինք հանգիստ կը զգայ թէ հայկական միջավայրի, թէ ալ օտար ընկերութեան մէջ:

Վերջին տարիներուն, կը նկատենք, որ կարգ մը երիտասարդ ծնողներ, գիտակցելով այս իրականութիւններուն, կը քաջալերեն իրենց երեխաները սորվելու հայերէն, երգելու,



պարելու հայերէն եւ հպարտ զգալու իրենց ինքնութեամբ՝ որուն անմիջական արդիւնքն է մեր դպրոցներու աշակերտութեան թիւի աճը: Ազգային արժէքներու հանդէպ հետաքրքրութիւնը կ'աճի երբ առողջ հայ ընտանիքներ կը գործեն մշակութապէս առողջ համայնքի մը մէջ: Մեր երիտասարդ մայրերը պետք է իրենց որոշումներուն մէջ միշտ նկատի առնեն այն իրողութիւնը, թէ՛ «ո՛չ ոք կը յարգէ իր ազգութիւնը արհամարողը» հետեւաբար, հայերէնը եւ հայկականը քաջալերելով կը շահին բոլորին յարգանքն ու վստահութիւնը:

21րդ դարու մայրը, ընդհանրապէս ըլլալով իր մօրմէն աւելի ուսեալ, բնականաբար աւելի բարձր սպասումներ կ'ունենայ իր զաւակէն եւ մօտէն կը հետեւի երեխայի դպրոցական արդիւնքներուն, ինչպէս նաեւ անոր ապագայի ուսման հետ առնչուած որոշումներուն: Ներկայ կեանքի ձեւն ու համաշխարհայնացման հուժկու հոսանքը սակայն փոխած են մօր պարտաւորութիւններն ու առաջնահերթութիւնը:

#### Ա. Տուն- աշխատանք հաւասարակշռութիւն

Զարգացած երկիրներու մէջ, բարձրագոյն ուսման հետեւող եւ մասնագէտ կիներու թիւը մեծ ըլլալուն, բնականաբար աշխատող կիներու թիւն ալ բարձր է: Տան տնտեսական բազմազան կարիքները եւ մանաւանդ այսօրուայ համաշխարհային մտահոգութիւն դարձած տնտեսական տագնապը կը պարտադրեն որ զրեթէ ամէն մայր, անկախ իր ուսման մակարդակէն, տունէն դուրս աշխատանքի երթայ եւ ան չբաւարարուի տան ներքին գործերով:

Երիտասարդ մայրեր, ծննդաբերելէ մի քանի ամիս վերջ, արդէն իսկ կը ստիպուին վերադառնալ իրենց աշխատանքին՝ վստահելով մանուկը մեծ մօր, մեծ հօր կամ ալ օտար խնամակալի մը: Ասոր հետեւանքն ալ կրնայ լուրջ մտահոգիչ ըլլալ, երբ մանուկը՝ իր հետ երկար ժամեր անցնող եւ իր կարիքները հոգացող խնամակալը կը սկսի դասել իր մօր համահաւասար, զայն նկատել որպէս Անձ մը, որ միշտ ներկայ է եւ պատրաստ՝ զինք լսելու եւ հոգալու, կատարելու պարտականութիւններ՝ որոնց մէջ մայրը պարտադրաբար կը թերանայ:

Աշխատող մօր առօրեան խճողուած կ'ըլլայ եւ գործէն տուն վերադարձին, ան յաճախ յոգնած եւ սպառած՝ կը դժուարանայ իր սովորական տնային առօրեայ պարտականութիւնները լիովին կատարելու: Տուն-գործ հաւասարակշռութիւնը պահելը եւ իր զաւակներուն հետ որակաւոր ժամանակ անցնելը բաւական դժուարին հարց կը դառնան աշխատող հայ մօր համար: Յոգնածութիւնը, ժամանակի եւ տրամադրութեան պակասը մայրը կը մղեն, որ դիմէ դիւրին կամ արագ լուծումներու. օրինակ՝ պատրաստ, արագ պատրաստուող եւ ոչ սննդաբար ճաշատեսակներ հրամցնելու իր ընտանիքի անդամներուն: Գալով դասերուն, մայրը համբերութիւնը եւ ժամանակը չ'ունենար պէտք եղած ուշադրութիւնը դարձնելու իր զակին բոլոր դասերուն եւ երեխային կրնայ փոխանցել այն տպաւորութիւնը, որ կան մէկ կողմէ՝ կարելոր եւ միւս կողմէ՝ երկրորդական դասեր որոնց վրայ ան ծանրանալու չէ:



Երեխաներ՝ երբ իրենց տուն վերադարձին, չունին հսկողութիւն, անկաշկանդ ժամեր կրնան տրամադրել համացանցի վրայ հաճելի եւ մոլութիւն յառաջացնող զբաղումներ գտնելով, մէկ կողմ թողնելով իրենց դասերն ու տան պարտականութիւնները: Մենք՝ մեծերս, կը կարծենք, որ համացանցի վտանգներէն տեղեակ ենք, սակայն մեր երեխաները համակարգիչի գործածութեան մէջ յաճախ մեզմէ շատ ասելի յառաջացած եւ հմուտ ըլլալուն, կրնան իրենց ծնողներու երեւակայութենէն անդին, վտանգաւոր կացութիւններու մէջ յայտնուիլ: Օրինակ՝ համացանցային կապ հաստատել անձերու հետ, որոնց նպատակն է բարեկամանալ, մանուկին վստահութիւնը շահիլ, եւ ի վերջոյ շահագործել փոքրիկները.....վիրթուալ աշխարհի մէջ մտնել փնտռելով իրենց արաթարը որ կրնայ մեծ վտանգներու առջեւ բերել երեխան: Հետեւաբար, մօր հսկողութիւնը անհրաժեշտ պայման է առողջ, արդիւնաւէտ եւ անվտանգ յետմիջօրէի ժամանցի եւ զբաղումներու պարագային:

Հսկողութիւն չ'ունենալու պարագային, հանգրուան առ հանգրուան, երեխան կը սկսի դպրոցէն վերջ տուն չվերադառնալ, յետմիջօրէն անցնել ընկերներուն հետ եւ ենթակայ ըլլալ ընկերային կեանքի վտանգաւոր հոսանքներուն, ինչպէս ալքոլի գործածութիւն, դիւրին թիրախ դառնալ թմրեցուցիչի վաճառականներու եւ շփում հաստատել այլ ժխտական ազդեցութիւն ունեցող անհատներու հետ:

Բնականաբար, երեխաներ, շփուելով իրենց օտար տարեկիցներուն հետ հետզհետէ հմուտ կը դառնան օտար լեզուներու մէջ, կը սկսին հայերէն լեզուն եւ հայկական մշակոյթը բաղդատել անոնց հետ եւ զանոնք երկրորդական դասել, սկիզբ դնելով օտարամոլութեան: Այս պարագային, տունը ինչպէս նաեւ հայ դպրոցը իրենց խիստ կարեւոր դերակատարութիւնը ունին հայկական լեզուի եւ մշակոյթի հանդէպ մնայուն հպարտութիւն դրոշմելու երեխաներուն մօտ:

### Բ. Ամուսնալուծումներ

Մեր ժամանակներուն այլեւս ընդհանրացած տխուր երեւոյթ մը դարձած է ամուսնալուծումը, որ նոր մարտահրաւերներու դէմ յանդիման կը բերէ նաեւ հա՛յ մայրը, երբ ան կը ստիպուի ընտանիքին բոլոր կարիքները առանձինն հոգալ, ստանձնելով զաւակներուն դաստիարակութեան, ուսման, ապահովութեան եւ յաճախ տնտեսական եւ կենցաղային հոգերը: Այս պարագային, երիտասարդ մայրը, յաճախ առանձին կը զգայ, իր ծանր բեռը առանձին տանելով, ան ինքզինք անկարող կամ ձախողած կը նկատէ եւ կը վախնայ, որ իր շրջապատը զինք համարէ անյարմար կամ թերացած: Կան մայրեր ալ որոնք իրենց անձնական հաճոյքներուն անձնատուր, կ'անտեսեն իրենց մայրական պարտաւորութիւններն ու պատասխանատուութիւնը, յոռի օրինակ ծառայելով իրենց երեխաներուն, միաժամանակ դուռ բանալով ծանր հետեւանքներու, ինչ կը վերաբերի իրենց զաւակներու դաստիարակութեան:

Գիտակցելով որ «ինչ որ ցանես, ա՛յն կը հնձես» հայ գիտակից մայրը պարտի հաւատարիմ մնալ իր մայրական կոչումին, առաջնահերթ կարեւորութիւն տալով իր զաւակներու դաստիարակութեան սուրբ գործին, անոնց մէջ կազմաւորելու՝ բարոյական արժէքներով եւ սկզբունքներով ապրող, ամուր նկարագիր ունեցող եւ ի մասնաւորի հայեցի ոգի եւ



գիտակցութիւն ունեցող անհատն ու քաղաքացին, սկսելով իր սեփական օրինակէն....: Մայրը եւ յատկապէս հայ մայրը խորապէս գիտակցելու է այն անհերքելի ճշմարտութիւնը, որ ազգի ճակատագիրը էապէս կը պայմանաւորուի իր զուակներուն ջամբած դաստիարակութեան որակէն: Որքան իրաւացի կը հնչէ այն խօսքը, որ՝ «մայրերու ափին մէջ, պիտի փնտռել ազգերու ճակատագիրը»:

ՅԱՐԳԱՆՔ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԵՐ ԲՈՒՈՐ ՄԱՅՐԵՐՈՒՆ:

## Խմբագրական

### ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐԱԴԱՐՁԻՆ ԴԷՍ ՅԱՆԴԻՄԱՆ



Ո՞ր ենք մենք այսօր, որպէս տարագիր հայութիւն եւ որպէս պետականութիւն՝ Յեղասպանութեան եւ Հայրենագրկումի 100-ամեակի սեմին: Հարիւրամեակ՝ որ կը գտնուի մեզմէ երկու քայլ անդին, երկու տարուան հեռաւորութեան վրայ միայն: Ի՞նչ ըրած ենք եւ կ'ընենք Հայ Դատի Պահանջատիրութեան գծով, որ ունենայ իրաւական, քաղաքական եւ կազմակերպչական լուրջ բովանդակութիւն առ ի նախապատրաստութիւն ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻ մեծ ստուգատեսին....:

Այստեղ շատեր ինքնախաբէութեան ջայլամային մօտեցումով՝ գուցէ անմիջապէս պատասխանեն, որ քանի՛-քանի՛ երկիրներու խորհրդարաններ, կառավարութիւններ, միջազգային ատեաններ եւ ակնառու անհատ անձնաւորութիւններ պաշտօնապէս ճանչցած են Հայոց Յեղասպանութիւնը եւ նոյնիսկ դատապարտած են զայն գործադրողը՝ Թուրքիան, մոռացութեան տալով այն կարեւոր հանգամանքը, թէ՛ Հայոց Յեղասպանութեան լոկ բարոյական ճանաչումը միջոց մըն է միայն՝ բարձրացնելու համար Արեւմտահայաստանի շօշափելի Պահանջատիրութիւնը, թէ՛ մենք տարիներ ու տասնամեակներ շարունակ, Հայոց Յեղասպանութեան ճանաչումը դարձուցեր ենք ԻՆՔՆԱՆՊԱՏԱԿ, զայն խզելով Արեւմտահայաստանի Պահանջատիրութեան վախճանական նպատակէն....միջոցը դարձնելով դիրաւ հետապնդելի նպատակ մեզի համար եւ մենք մեզ օրօրելով, որ նման աշխատանքով կրնանք կատարած համարել մեր նահատակներու սրբազան կտակը:

Տակաւին, շատեր գուցէ պատասխանեն, ըսելով թէ արդէն իսկ կազմուած է Հարիւրամեակի Պետական Յանձնաժողով, որ կը կազմակերպէ յոբելէնական գիտաժողովներ, ցուցահանդէսներ եւ այլ պետական միջոցառումներ, որոնց նպատակը, սակայն, որքան որ կը տեսնենք, էապէս ցուցադրական ու մակերեսային է, քանզի այդ բոլոր ձեռնարկներն ու գործունէութիւնները, որքան ալ կարեւոր ըլլան անոնք, կոչուած են կարծէք քողարկելու





բուն, էական հիմնախնդիրը, որ Արեւմտահայաստանի Պահանջատիրութիւնն է, մեր պանդուխտ լեռան՝ Արարատին հետ միասին....

Պատճառը այս ջայլամային քաղաքականութեան: Մէկ կողմէ՝ Տարագիր արեւմտահայութիւնը տակաւ կը հեռանայ իր տարագրեալի եւ հայրենագրեալի գիտակցութենէն, կը մնայ անտիրական ու անկազմակերպ վիճակի մէջ առ այսօր, եւ փոխանակ համահայկական վերակազմակերպումի ուղղութեամբ աշխատանք տանելու, կը շարունակէ իր ճահճացած կեանքը՝ հատուածականութեան եւ հատուծամոլութեան թմբիրին մէջ, չկարենալով յաղթահարել անձնական, խմբակային, կուսակցական նեղ նկատառումները եւ բարձրանալ համահայկական վերակազմակերպումի՝ Տարագիր Արեւմտահայութիւնը մէկ ներկայացուցչական, Լիազօր Մարմնի մը մէջ խտացնելու հրամայական գիտակցութեան եւ յանձնառութեան: Միւս կողմէ ալ, ՀՀ իշխանութիւնները ոչ մէկ լուրջ քաղաքական ու կազմակերպչական քայլի կը դիմեն՝ արդարութեան վերականգնումին, հողային պահանջատիրութեան ուղղութեամբ: Անոնք՝ իրենց ֆութպոլային դիւանագիտութեամբ, Հայաստան-Թուրքիա արձանագրութիւններու ստորագրութեամբ, թէ այլապէս, կ'օրօրեն ու կը քնացնեն հայ ժողովուրդը, զայն ուղղակի թէ անուղղակի կը քաջալերեն՝ մոռնալու Արեւմտահայաստանի դատը, արդարութեան վերականգնումը....:

Եթէ իրերը իրենց անունով կոչելու համարձակախօսութիւնը ունենանք, Հայաստանի Գ. Հանրապետութեան պետական այրերը կը վարեն հայրենավնաս գործունէութիւն: Անոնք՝ սեփականաշնորհելով երկրին ողջ հարստութիւնը իր բնական պաշարներով եւ ընդերքով միասին, հարստահարելով ու կեղեքելով հայրենի ժողովուրդը, դէմ կը գործեն պետականութեան կայացումին, դուռ կը բանան ահագնացող թիւով արտագաղթին, Հայաստանի հայաթափումին, ինչ որ կը սպառնայ ազգային մեր անվտանգութեան ու լինելութեան: Փաստօրէն, անոնք կը գործեն ազգի ու պետութեան համայնական շահերուն դէմ...: «Արեւելահայաստանը պետութիւն չէ, այլ՝ պազար...», կը գրէր հայաստանցի մը վերջերս, զոր կորսնցնելու ընթացքին մէջ կը գտնուինք այսօր...: Հետեւաբար, ՀՀ իշխանութեանց մօտ ի սպառ բացակայ են պետական մտածելակերպի ըմբռնումն ու գործելակերպը, ինչ որ հնարաւորութիւն պիտի ընձեռէր որ համայն հայութիւնը կարենար ստեղծել ներհայկական միասնականութիւն՝ ճշգրտօրէն բանաձեւելու համար համազգային իր իրաւունքները եւ ազգային-պետական ռազմավարութիւն մշակելու անոնց հետապնդման ուղղութեամբ...:

Հարց կը ծագի հետեւաբար, թէ՛ արդե՞՞ք Արեւմտահայաստանը արդէն գրեթէ մոռցուած յուշ ու յիշողութիւն է դարձած, թէ՛ Սփիւռքի մէջ, թէ՛ ալ Հայաստանի: Շրթունքի մարզա՞նք, կամ գիր ու գրականութեան մէջ լոկ յիշատակուող կորուսեալ եզե՞րք հայրենի, որուն համար պայքարելու կամքն ու առաքինութիւնը կորսնցուցած ենք վաղուց....:

Մեր այս անտարբերութեան եւ բովանդակային գործունէութեան բացակայութեան ի հակադրութիւն, Թուրքիոյ նոր-օսմանեան պետութիւնը՝ 1915-ի դարադարձի սեմին, տենդագին աշխատանքի է լծուած, պետական շռայլ յատկացումներով կազմակերպելու



«թրքական սփիւռքը», զայն զինելու ամուր կառոյցով, որպէս հակակշիռ մանաւանդ «կուռ կազմակերպուած հայ սփիւռքին», որ կը մնայ ցարդ անգոյ:

Այս խորապատկերին վրայ, ուրախութիւն է արձանագրել, որ Արեւմտահայաստանի հողին վրայ, թրքական ցեղապաշտ եւ բռնատիրական պետութեան լուծին տակ ապրող «թաքուն հայեր» եւ կրօնափոխ հայեր սկսած են ազգային զարթօնք ապրիլ, կազմակերպուիլ հայրենակցական թէ այլ կառոյցներու հովանիին տակ, ինչպէս օրինակ՝ «Մուսա Լերան հայրենակցական Միութիւն»ը, «Սասունցիներու Միութիւն»ը, «Համշէնահայերու Միութիւն»ը, «Տերսիմի Հայերու Միութիւն»ը...: Այս կարեւոր զարգացումը յոյս կը ներշնչէ մեզի եւ կը պարտաւորեցնէ մեզ, որ մեր կարելի աջակցութիւնը ցոյց տանք անոնց, յանուն անոնց կազմակերպչական հզօրացման, ազգային-քաղաքական գիտակցութեան ամրապնդումին:

Իսկ մենք՝ տարագիր արեւմտահայութեան բեկորներս, ցրուած աշխարհի երեսին, տարբեր հայագաղութներու մէջ: Ունինք իրաւագրկեալի, տարագրեալի եւ հայրենագրկեալի ինքնագիտակցութիւնը...թէ՞ համակերպած ենք մեր իրավիճակին, դարձած ենք քաղքենիացած անտարբերներ եւ մեր մէջ սպաննած հաւաքական ազատագրութեան ոգին ու կամքը: Հրաժարա՞ծ ենք մեզմէ բռնախլուած Արեւմտահայաստանէն, հոն վերադառնալու տունդարձի իրաւունքէն...:

Եթէ Տէրն ու Պահանջատերը կը մնանք մեր Արդար Դատին, եթէ ունինք զայն հետապնդելու իրա՛ւ կամքն ու յանձնառութիւնը, պատասխանատուութիւնն ու արժանապատուութիւնը, այն ատեն պարտինք ձեւաւորել՝ այդ ԴԱՏԸ ամէնէն արդիւնաւէտութեամբ ու իրաւականօրէն հետապնդելու միտող Մարմինը, յաղթահարելով ամէն հատուածական նեղմիտ մտածողութիւն, կուսակցական մենատիրութեան մարմաջ, թէ գաւառամտութիւն, ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ նորոգ գիտակցութեամբ ու տեսլականով զինուած: Պարտինք վերակազմակերպուիլ որպէս Տարագրեալ արեւմտահայութեան ժառանգներ եւ ստեղծել մեզ լիիրաւ ներկայացնող Մէկ Լիազօր, Ներկայացուցչական Մարմինը, որ կարենայ նաեւ ունենալ իրաւական կարգավիճակ եւ մեզ ներկայացնել միջազգային աստեաններուն առջեւ:

Ցեղասպանութեան եւ Հայրենագրկումի Դարադարձին դէմ յանդիման, սրբազան եւ անյետաձգելի ՊԱՐՏԱԻՈՐՈՒԹԻՒՆ է նման ՄԱՐՄՆԻ մը ստեղծումը, եթէ ճշմարտօրէն ՏԷՐՆ ենք մեր արդար Դատին եւ ունինք քաղաքական գիտակցութիւնն ու կամքը զայն հետապնդելու ամենայն արդիւնաբերութեամբ եւ արժանապատուութեամբ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

## Հարցազրոյց

### ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ հիմնադիր անդամ ՊՐՆ. ՎԱՐԴԱՆ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՀԵՏ

Ուրախութեամբ կը ներկայացնենք մեր ընթերցողներուն այն բացառիկ Հարցազրոյցը, որ ունեցանք



ՆԱԽԱԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ հիմնադիր անդամ, Մաեստրօ Պրն. ՎԱՐԴԱՆ ՅԱԿՈԲԵԱՆԻ հետ, որ հիւրաբար Կիպրոս կը գտնուէր այդ օրերուն, ղեկավարելու համար Կիպրոսի Միմֆոնիք Նուագախումբը՝ «Հայկական եւ Իտալական Երաժշտութիւն» խորագիրը կրող Երեկոներուն, որոնք տեղի ունեցան յաջորդաբար Լիմասոլի «Բիալթօ» սրահին մէջ՝ 11 Ապրիլին եւ Նիկոսիոյ

«Մթրովոլոս»ի քաղաքապետարանի սրահին մէջ՝ 12 Ապրիլին: Ստորեւ կը ներկայացնենք Հարցազրոյցը երկու մասերով.-

<http://www.youtube.com/watch?v=gc4o152MiWQ&feature=youtu.be>

<http://www.youtube.com/watch?v=ZrvT5BHR74E>

## Սփիւռքը շրջանցում է պաշտօնական «ֆիլտրերը» Սիրանոյշ Պապեան

Մեր գրուցակիցն է Միշիկընի համալսարանի Տիրպոն քաղաքի մասնաճիւղի Հայագիտական հետազոտութիւնների կենտրոնի վարիչ, դոկտոր Արա Սանճեանը



Հ.-Պարոն Սանճեան, կարծիք կայ, որ Հայաստանի անկախութեան պատմութեան մէջ առաջին անգամ է, որ Սփիւռքը փորձում է ներգրաւուել Հայաստանի ներքաղաքական պրոցեսներին

Պ.-Երբ 1920-ականների սկիզբին միջազգային քաղաքականութեան ասպարեզից դուրս մղուեց

հայկական հարցը, եղեոն վերապրածների՝ իրենց բնօրրան վերադարձը դարձաւ անհնարին: Խորհրդային սահմաններից դուրս բնակուող սփիւռքահայութեան մօտ միշտ կար երկություն՝ ո՞րն է հայապահպանութեան առանցքը կազմող իր «գործնական» հայրենիքը՝ պատմական Հայաստանն ու Կիլիկիան, որտեղից մեծ մասամբ սերում են



իրենց նախնիները, թե՛ պատմական Հայաստանի հայերի կողմից բնակուած ու կառավարուող, այդ ժամանակ՝ խորհրդային, արեւելեան հատուածը: Սփիւռքի կազմաւորման առաջին չորս տասնամեակներում, երբ առաջացան մերօրեայ կառոյցների մեծ մասը, սփիւռքահայ ներքաղաքական պայքարի ջրբաժանը Հայաստանի խորհրդային վարչակարգի հետ հաշտուել-չհաշտուելու հարցն էր: Թուրքիայից պահանջատիրութիւնն առաջնային դարձաւ միայն 1960-ականներից յետոյ, և այդ ժամանակուանից սփիւռքահայ քաղաքական ուժերի միջեւ առաջացած որոշակի փոխհասկացողութիւնը երբեք բաւարար չեղաւ վերացնելու «սառը պատերազմի» տրամաբանութիւնից բխած սփիւռքահայ կառոյցների փոխմրցակցութիւնը: Սփիւռքի ներսում 1920-ականներից զուգահեռաբար կարելի է նկատել պայմանականօրէն ասած «պահանջատիրական» ու «երեւանամետ» ուղեգծեր: Խորհրդային տարիներին սփիւռքյան կառոյցների համար Հայաստանի ներքին քաղաքական կեանքին մասնակցելու մեծ հնարաւորութիւն չկար: 1990-ից յետոյ սփիւռքի մէջ գործող հայ աւանդական երեք կուսակցութիւնները շեփորով ու ծնծղայով վերադարձան Արեւելահայաստան, բայց իրենց արձանագրած յաջողութիւնները շատ սահմանափակ են: Առաւել եւս, այդ կուսակցութիւնների արտասահմանեան կառոյցներն աստիճանաբար ենթակայ դարձան Երեւանի մէջ իրենց նոր կուսակիցների կողմից առնուած որոշումներին, որոնք միշտ չէ, որ ընկալելի են սփիւռքի մէջ: Վերջին քսան տարիներին, հնչակեան ու ռամկավար կուսակցութիւնների հայաստանեան մասնաճիւղերը մնացին շատ թոյլ, յաճախ՝ պառակտուած, և նրանց գործունէութեան մասին շատ բան չկար պրոպագանդելու իրենց համապատասխան արտասահմանեան կուսակիցների կողմից: Այս պայմաններում այս երկու կուսակցութիւնները մեծ մասամբ շարունակեցին խորհրդային իշխանութեան տարիներից ժառանգուած, հետեւողականօրէն Երեւանի կառավարութեան համակիրն ու պրոպագանդիստ լինելու սովորոյթը: Այս առումով միակ բացառութիւնը 2008-ին Հնչակեան Կուսակցութեան Քալիֆոռնիայի մասնաճիւղի կտրուկ, բայց կարճատեւ դիրքորոշումն էր յօգուտ Լեւոն Տէր-Պետրոսեանի:

Հ.-Այսինքն՝ հիմնականում սփիւռքում գործում է Հայաստանի մասին լաւ կամ ոչինչ յայտնի բանաձէ՞ւր:

Պ.-Միշտ Հայաստանի կառավարութեան, իրենց բնորոշմամբ, պետականութեան հետ լինելու այս դիրքորոշումը խոր արմատներ ունի սփիւռքի մէջ և շատ աւելի լայն տարածում, քան հնչակեան ու ռամկավար կուսակցութիւնների համեմատաբար նեղ շրջանակները: Այս դիրքորոշման հենքը կազմում է այն ամրացած համոզմունքը, թէ սփիւռքի մէջ հայրենասիրական ոգին բարձր պահելու համար պէտք է միշտ շեշտել Հայաստանի մասին դրականը: Օրինակ, վերջին ամիսներին Հայաստանի հետ սերտ կապեր ունեցող սփիւռքահայ գործիչներից լսել եմ փաստարկներ, թէ սփիւռքի մէջ շատ պէտք չէ բարձրաձայնեմք Հայաստանի մէջ փտածութեան (կոռուպցիա) ու կաշառակերութեան մասին, որովհետեւ դա սփիւռքահայ հնարաւոր նուիրատուների համար կարող է պատրուակ հանդիսանալ, որ խուսափեն նիւթապէս օժանդակել Հայաստանին, կամ պէտք չէ շատ շեշտել Հայաստանի բուհական համակարգին մէջ կաշառակերութիւնը, որոշ մասնագիտութիւնների դէպքում՝ ուսումնական ծրագիրների հնացածութիւնը և տարբեր համալսարաններում օրեցօր աւելացող միակուսակցականութիւնը, որովհետև մեր ձգտումը



պետք է լինի սփիւռքահայ երիտասարդներին մղել, որ Հայաստան գնան և իրենց բարձրագոյն կրթութիւնը այնտեղ ստանան: Հայաստանի թերութիւնները հրապարակային քննարկումներից հեռու պահելը երկար տարիներ սահմանափակել է սփիւռքահայ մշակութային ու կրթական հաստատութիւնների կողմից հանրութեան համար կազմակերպուող միջոցառումների՝ դասախոսութիւնների, քննարկումների օրակարգը: Իհարկէ, Հայաստանի թերութիւնների կողքին, սփիւռքի մէջ կան նաեւ այլ «թապուներ»՝ կապուած ներքին խնդիրների հետ: Քննարկել Հայաստանի կամ սփիւռքի թերութիւնները, նշանակում է ընդունել, թէ ամէն ինչ փայլուն չէ հայ իրականութեան մէջ, և սա յաճախ ոչ հայրենասիրական, նոյնիսկ հայ հասարակութիւնը պատակտող հանգամանք է համարում:

Հ.-Իսկ Դաշնակցութեան դիրքորոշումը տարբէ՞ր է հնչակեաններից ու ռամկավարներից:

Պ.-Դաշնակցական սփիւռքահայ լրատուամիջոցների հետաքրքրութիւնը Հայաստանի ամենօրեայ թերութիւններով վերջին քսան տարիներին ուղիղ համեմատական է եղել Երեւանում կուսակցութեան քաղաքական դիրքորոշումների հետ: Դաշնակցական սփիւռքահայ մամուլը, Լեւոն Տէր-Պետրոսեանի տարիներին, անխնայ քննադատութեան էր ենթարկում հայաստանեան իրավիճակը, բայց Ռոպերթ Քոչարեանի տասը ու Սերժ Սարգսեանի առաջին երկու տարիներին՝ մինչեւ հայ-թուրքական փրոթոքոլների նախաստորագրութիւնը, նոյն լրատուամիջոցները համարեա քար լռութիւն պահպանեցին Հայաստանի նոյն, ըստ որոշ մարդկանց՝ նոյնիսկ աւելի վատացող իրավիճակի շուրջ: Այսպիսով, 1994-95-ին Դաշնակցութեան դէմ Հայաստանի մէջ քաղաքական հալածանքը մանրամասն ու մեծ կիրքով մեկնաբանուեց սփիւռքի դաշնակցական լրատուամիջոցների կողմից, բայց 2008-ի գրեթէ տասնապատիկ աւելի ծանր հալածանքները, այս անգամ՝ ո՛չ Դաշնակցութեան դէմ, համարեա անտեսուեց:

Հ.-Կարո՞ղ ենք ասել գիտակցական փոփոխութիւններ են տեղի ունենում նաեւ սփիւռքահայութեան մէջ:

Պ.-Այն, ինչ կատարուեց սփիւռքի տարբեր գաղութների մէջ փետրուար 18-ից յետոյ, բնական զարգացում էր՝ կապուած հաղորդակցութեան միջոցների և տեղեկատուական տեխնոլոկիաների ընձեռած նոր հնարաւորութիւնների հետ: Սփիւռքի մէջ վաղուց կան «երեւանամէտ» գործիչներ ու մտաւորականներ՝ եռակուսակցական համակարգից դուրս կամ այդ կուսակցութիւնների մէջ՝ իբրեւ փոքրաթիւ ընդդիմութիւն: Այս խմբի մէջ կարելոր տեղ են գրաւում անձինք, որ խորհրդային տարիներին Հայաստանում են ստացել իրենց բարձրագոյն կրթութիւնը կամ յետխորհրդային ժամանակաշրջանում մի քանի ամսով կամ տարիով Հայաստանում են գտնուել տարբեր ծրագրերով: Հայաստանում առցանց լրատուամիջոցների տարածուելը այս խաւը անկախ դարձրեց սփիւռքեան լրատուամիջոցներից՝ հայրենիքի մասին տեղեկութիւն ստանալու առնչութեամբ, իսկ աւելի ուշ, սոցիալական ցանցերը առիթ հանդիսացան, որ նոյն մարդիկ նաեւ կարողանան իրենց խօսքը անմիջականօրէն հայրենիք հասցնել՝ շրջանցելով սփիւռքահայ ու Հայաստանի պաշտօնական լրատուամիջոցների «ֆիլթրերը»: Այս փոփոխութիւնը պիտի լինի տեւական և Հայաստանի մէջ քաղաքականութեամբ հետաքրքրուող հատուածին աւելի ճիշդ պատկերացում պիտի հաղորդի սփիւռքի մէջ գոյութիւն ունեցող քաղաքական



բազմակարծութեան մասին: Բայց, չպէտք է նաեւ գերագնահատել Հայաստանի հանրութեան համար միայն վերջերս բացայայտուած սփիւռքահայ այս հատուածի ներուժը՝ փոխելու համար նոյն ինքն այն գաղութները, ուր իրենք ապրում են: Այս խումբը նօսք է: Գործնականօրէն համախոհ անձանց միջեւ չկայ կառուցուածքային համագործակցութիւն: Նրանք չեն սփիւռքյան կրօնական, քաղաքական, մշակութային, մարզական ու կրթական կառոյցների ղեկավարները: Նրանք դեռեւս չունեն ներուժ՝ կազմակերպելու սփիւռքեան մարդաշատ հանրահաւաքներ՝ առանց աւանդական կառոյցների համամտութեան: Նրանց համար դեռեւս հեշտ չի իրենց տեսակետները պարզաբանել սփիւռքահայ աւանդական լրատուամիջոցներով: Նրանք սոցիալական ցանցերի կարիքն ունեն իրենց գաղափարները նոյնիսկ իրենց ապրած քաղաքներում տարածելու համար: Օրինակ, երբ 2009-ին ՀՅԴ-ն որոշեց ընդդիմանալ հայ-թուրքական փրոթոքոլներին, այն կարողացաւ նախագահ Սարգսեանի արտասահմանեան երթուղու տարբեր կանգառներում վերջինիս դէմ ի մի բերել մի քանի հարիւր կամ մի քանի հազար ցուցարար: Միւս կողմից, երբ 2012-ի ամռանը Լիբանանում էի գտնուում, և առաջացաւ եռակուսակցական համակարգից անկախ նախաձեռնութիւն՝ հոգեհանգիստ կատարելու հայկական բանակի սպա բժիշկ Վահէ Աւետեանի հոգու համար, ներկաների թուաքանակը հազիւ մէկ տասնեակ էր, ներառեալ՝ ես, որ այդ մասին իմացել էի միայն Ֆէյսպուքից: Սփիւռքյան աւանդական կառոյցները Լիբանանում այդ լուրը համեմատաբար անկարելոր էին համարել: Այն սփիւռքահայերը, որոնք այսօր զօրակցութիւն են յայտնում Հայաստանի մէջ անմիջական և արմատական վերափոխումներ պահանջող ընդդիմութեանը, սովորաբար նաեւ վաղուց քննադատներն են իրենց ապրած հայագաղութների աւանդական կառոյցներին:

## Մեր երկիրը երկունքի ցաւերու մէջ է, այնպէս ինչպէս հացադուլաւոր Րաֆֆի Յովհաննիսեան...

### Հայաստան | Խօսք | Անուշ Ամիրբեկեան

Յետընտրական զարգացումների շուրջ «Առաջին լրատուական»-ը գրուցեց Կիպրոսի «Ազատ Խօսք» համացանցային թերթի խմբագիր Երան Գույումճեանի հետ:



Հ.-Տիկի՜ն Գույումճեան, ինչպէ՞ս եք վերաբերում ՀՀ-ում և մասնաւորապէս Ազատութեան հրապարակում ընթացող քաղաքական գործընթացներին:

Պ.-Շատ դրական կը վերաբերիմ ՀՀ-էն ներս, ի մասնաւորի Ազատութեան հրապարակին վրայ ընթացող գործընթացներուն, որոնք նոր յոյս են հայրենի մեր ժողովուրդին համար, որ անգամ մը եւս ոտքի է ելած՝ պաշտպանելու իր քաղաքացիական իրաւունքները, տէր կանգնելու՝ նախագահական ընտրութիւններուն, քուէատուփին մէջ նետած իր վստահութեան քուէին.....: Տեղի ունեցող հանրահաւաքները



մեր ժողովուրդի սրբազան ըմբոստութիւնն են, արդար ընդվզումը՝ տեղի ունեցած հերթական ընտրախախտումներուն, ընտրակեղծիքներուն դէմ, որոնք կարծէք տակաւ կը կատարելագործուին՝ ապահովելու համար գործող իշխանութեան վերարտադրութիւնը: Կը թուի թէ հայրենի մեր ժողովուրդը դարձեալ արթնցած է իր թմբիբէն, նախ իր քուէն տալով Բաճիկի Յովհաննիսեանին, յաղթահարելով վախն ու տարբեր ահագոյու ճնշումները... Եւ ապա Ազատութեան հրապարակին վրայ համախումբ պայքարելով՝ մէկ սիրտ, մէկ հոգի, յանուն իր իրաւատիրութեան, իր արժանապատուութեան.....:

Հ.-Ի՞նչ նմանութիւններ ու տարբերութիւններ էք տեսնում 2008-ի և 2013-ի նախագահական ընտրութիւններից յետոյ ձեւաւորուած իրավիճակների միջեւ:

Պ.-Անցեալ նախագահական «ընտրութիւններէն» ետք ալ, ժողովուրդը գնաց հաւաքական ընդվզումի եւ հանրահաւաքներու ճամբով պաշտպանելու իր ժողովրդավարական կամ քաղաքացիական իրաւունքները... Արտաքուստ, գուցէ թուի թէ իրավիճակը նոյնն է... Սակայն, այս անգամ, շեշտը դրուած է հաւաքական պատասխանատուութեան վրայ... Առաջնորդը՝ Բաճիկի Յովհաննիսեան, կոչ կ'ընէ որ ժողովուրդը Տէր կանգնի իր իրաւունքին, որ իշխանութիւնը վերադարձուի ժողովուրդին... Ան չի միտիր որ հանրութիւնը կուրօքէն հետեւի իր առաջնորդին, այլ՝ որ հանրահաւաքին ամէն մասնակից զգայ եւ ստանձնէ իր պատասխանատուութիւնը... Այլ կարելոր տարբերութիւն մըն է հանրահաւաքի մթնոլորտը, որ կարծէք սիրոյ, համերաշխութեան, բարեւի յեղափոխութիւն է... Չկան երբեք պիտակաւորումներ, անուանարկումներ, ատելութիւն կամ թշնամանք հրահրող արտայայտութիւններ: Սա վերկուսակցական, համաքաղաքացիական շարժում է գերազանցօրէն...

Հ.-Տիկի՜ն Գույումճեան, ինչի՞ հնարաւոր կը լինի հասնել պայքարի այս եղանակով:

Պ.-Բաճիկի Յովհաննիսեան արդէն հացադուլի մէջ է Ազատութեան հրապարակին վրայ, աւելի քան երկու շաբաթ է վեր... Ան յատկապէս շեշտեց, որ իր հացադուլը է նաեւ սուտադուլ, կեղծիքադուլ... Այն տպաւորութիւնը ունիմ, թէ ան կը միտի էական բարեփոխումներ յառաջ բերել մեր երկրի քաղաքական-հասարակական դաշտին մէջ... Ինքնամաքրման ճամբով, կը միտի առողջացնել երկրին բարոյահոգեբանական մթնոլորտը... բարոյական-հոգեւոր նոր արժէքներ ներշնչել պետական-հասարակական անառողջ կարգ ու սարքին մէջ: Մեր երկիրը ներկայիս երկունքի ցաւերու մէջ է, այնպէս ինչպէս հացադուլաւոր Բաճիկի Յովհաննիսեան... Եւ ես յոյս ունիմ, որ այդ ցաւերն ու տառապանքը ի վերջոյ ծնունդ պիտի տան մեր նոր Զարթօնքին կամ Վերածնունդին:

Հ.-Ըստ Ձեզ, ինչ կարող է անել սփիւռքն այս իրավիճակում: Կարո՞ղ են արդեօք Հայաստանից դուրս հայ քաղաքական և հասարակական շրջանակները ՀՀ իշխանութիւններին ստիպել գնալ արմատական բարեփոխումների:

Պ.-Սփիւռքի մէջ, արդէն իսկ կեանքի կը կոչուին փոքր հասարակական բջիջներ առ ի զօրակցութիւն ԱԶՍՏՈՒԹԵԱՆ հրապարակին վրայ եւ այլուր տարածուող Համաժողովրդական շարժումին... Սա վերկուսակցական համապետական, համաքաղաքացիական, համահայկական ՇԱՐԺՈՒՄ է, որ տակաւ իր հզօր ալիքին մէջ



պիտի առնէ հայ Սփիւռքը: Սակայն, այստեղ պէտք է նշեմ, որ Սփիւռքի պաշտօնական կառոյցները, կամ էսթապլիշմենթը, հակուած է զօրավիզ ըլլալու ՀՀ կառավարութեան՝ վերապահութիւն կամ զգուշաւորութիւն ցուցաբերելով իբր թէ երկիրը «ապակայունացնող» որեւէ շարժումի... Սա, ըստ իս, միտքերը օրօրելու միայն կրնայ ծառայել, քանզի բուն ապակայունացման պատճառը՝ գործող կառավարական ճգնաժամն է, ընկերային-սոցիալական ահռելի խնդիրները, հասարակական բեւեռացումը, կաշառակերութիւնը, անարդարութիւնները, խտրականութիւնը, անպատժելիութիւնը, որոնց հետեւանքով տակաւ կ'ահագնանայ արտագաղթը՝ սպառնալով ազգային մեր անվտանգութեան: Ես յոյսով եմ որ Սփիւռքի առողջ տարրերը, հետզհետէ միանալով, պիտի կարենան ոչ միայն իրենց ձայնը աւելի լսելի դարձնել, այլև ներգրաւուիլ այս հզօր համաժողովրդային շարժման մէջ, որուն վախճանական նպատակը՝ սոսկ իշխանափոխութիւնը չէ, այլ կառավարման նոր համակարգի մը ստեղծումը՝ ազատ ու արդար, որ հետամուտ ըլլայ համազգային մեր շահերուն եւ իրաւունքներուն, էսպէս հիմնուած ըլլայ ազգային-մշակութային-բարոյական արժեհամակարգի վրայ եւ նոր հեռանկար պարզեւէ մեր երկրին ու ժողովուրդին:

## Յօդուածներ

### Հայ Մամուլի Նկատմամբ Անլրջութիւն

Մենք Ենք՝ Մեր Ցաւերը Շարքեն

Երբ կը խօսուի հայ մամուլի մասին, առաջին հարցադրումները, որոնք կը ծագին շատերու մտքին մէջ, հետեւեալներն են.



- Կա՞ն ընթերցելի թերթեր

- Ունի՞նք ընթերցող հասարակութիւն

Պատասխանները կրնան ըլլալ խայտաբղէտ, տեսակաւոր, նայած թէ ամէն ոք ինչպէ՞ս կ'ընկալէ հայ թերթը, ինչպէ՞ս կը վերաբերուի անոր հետ, ինչպէ՞ս կը գնահատէ, իսկ ամենէն կարեւորը՝ ո՞րքանով հետաքրքրուած է հայ թերթով:

Բացարձակ, նոյնիսկ անվիճելի իրողութիւն է, որ երէկուան հայ թերթը այսօրուանը չէ, անցեալինը՝ ներկան չէ, կայ հսկայական տարբերութիւն, աւելի ճիշդ՝ վիհ, որակի ու մակարդակի առումներով, հետաքրքրութեան ու շահագրգռութեան իմաստներով:

Հայ թերթը, որ եղած է հայ մտաւորականութեան դասագիրքը, հայ մանկավարժութեան դպրոցը, հայ հասարակութեան շտեմարանը, հայ քաղաքականութեան ուղեցոյցը, միով բանի՞ հայ ժողովուրդին «հանրագիտարան»ը, դժբախտաբար, այսօր, չունի նոյն հմայքը, գուրկ է գրաւչութենէ, կը տառապի մէկէ աւելի... կաղացումներով:





Մեր կարծիքով, այս անկումին կամ յետադիմութեան հիմնական պատճառներէն են՝

- Մամուլ հասկացողութեան մասին ապալրջութիւնը
- Մամուլի դերակատարութեան մասին թիրըմբոնումը
- Մամուլի առաքելութեան մասին թերահաւատութիւնը
- Մամուլի առաջադրութեան մասին անտեղեակութիւնը
- Մամուլի ազդեցութեան մասին անհամաձայնութիւնը

Ցաւալին այն է, որ հայ մամուլը՝ իր արժանիքներով, առաքինութիւններով ու բարեմասնութիւններով, լուրջ ու խոր ուշադրութեան չէ արժանացած վերջին տարիներու ազգային իշխանութիւններուն կողմէ եւ այն թողլքուած է իր տխուր ճակատագիրին:

Հետեւա՞նք:

Այսօրուան անփառունակ ու թափթփած վիճակը հայ մամուլին մեծամասնութեան, խիստ անորոշ ապագայի մը ամենայն հաւանականութեամբ, որ արդէն կը գուժէ ահաւորը, կ'ահագանգէ աննախատեսելի, բայց... կանխատեսելին:

Ուղղակի զարմանալի է, որ պատասխանատու կողմեր, աւելի դիպուկ՝ մամուլի պատասխանատու-անպատասխանատուներ, կամ անպատասխանատու-պատասխանատուներ, դատապարտելի տգիտութեամբ ու հիւանդագին անձնականութեամբ վերաբերուեցան ու տակաւին կը վերաբերուին հայ մամուլին հետ, զայն հասցնելով անճիտումի եւ աղճատումի այս վտանգին:

Ուրիշ մտահոգիչ իրողութիւն մըն է՝ հայ մամուլի սպասարկուներ ու զինուորագրեալներ չպատրաստելու աններելիութիւնը, նոյն անհեռատես եւ անտեսլապաշտ կողմերէն, որոնք շարունակեցին ու կը շարունակեն իրենց փառատենչիկութիւնները, մամուլը առաւել եւս անշքացնելով եւ ավազնելով:

Ճիշդ չեն այն չքմեղանքները կամ արդարացումները, որ նոր սերունդին մօտ չկան արժանաւորներ ու շնորհալիներ, որոնք կրնան ՀԱՅ մամուլը ասպարէզ դարձնել, նուիրուիլ անոր, ապրի՛լ զայն:

Բայց, ո՞վ պիտի հոգայ այս... հոգը:

Ան՝ որ ժամանակաւորապէս բազմած է աթոռակի՞ մը վրայ:

Ան՝ որ անցողիկօրէն թառած է ճիւղի՞ մը վրայ:

Ան՝ որ ամբարտաւանօրէն հասած է անարժան դիրքի՞ մը:

Ան՝ որ անտեղիօրէն գրաւած է փխրուն պաշտօն՞ մը:



Ահաւասիկ, այստեղէն կը սկսի հարցերուն-հարցը, հայ մամուլը ձգելով ինքնահոսի մը, որ ոչ իր կոչումին եւ ոչ ալ իր առաքելութեան վրայ կրնայ գտնուիլ, ի տես այդպիսիներու անճարակութեան:

Ինծի համար միշտ հարց եղած է, մղձաւանջային ըլլալու աստիճան, թէ ինչո՞ւ մեր վարժարաններու բարձրագոյն դասարաններէն մէկուն մէջ, գէթ շաբաթը մէկ պահ (քառասուն հինգ վայրկեան, շա՞տ է) չդասաւանդուի «Հայ մամուլ», պարզապէս գաղափար մը տալու համար հայ աշակերտութեան անոր կարելորդութեան ու հրատապութեան մասին, համապատասխան պատկերաւոր մանրամասնութիւններով ու կենդանի օրինակներով:

Անձնապէս, այս դառն, բայց նոյնքան ալ գոհացուցիչ փորձառութիւնը ունեցած եմ եւ ունիմ, երբ Հայկազեան Համալսարանի մէջ հայ մամուլի եւ ընդհանրապէս մամուլի մասին դասախօսած եմ, ուսանողութեան համար բոլորովին «անձանօթ» նիւթ մը, նոր հորիզոն մը բանալով անոր մօտ, որպէս գիտութիւն, դպրոց ու մասնագիտութիւն:

Կը նշանակէ թէ՛ անհրաժեշտ է հայ մամուլը եւս դարձնել ուսումնառութեան նիւթ, նախ ծանօթացնելու զայն, ապա, կարելորելու անոր անփոխարինելիութիւնը, ուրկէ կրնան առաջանալ խոստմնալի թեկնածուներ կամ վստահելի պատրաստակամներ, որոնք կ'ուզեն ընթանալ այդ ուղիով եւ ընդգրկել զայն:

Բայց, իրաւացիօրէ՛ն, ոմանք պիտի հարցադրեն թէ՛ նման մասնագիտութիւն ընտրողներ, ո՞ր պիտի պաշտօնավարեն, ո՞ր պիտի ծառայեն, ի՞նչ պիտի ըլլայ անոնց վարձատրութիւնը, ի՞նչ երաշխիքներ պիտի ունենան:

Իրաւունք ունին, որովհետեւ ո՛չ խնամատար կայ, ո՛չ հովանաւոր, ո՛չ գնահատող, ո՛չ ալ քաջալերող, հետեւաբար, նոյն անպատասխանատուներու եւ անըջութիւններու պատճառով, հայ մամուլը կրնայ հիւծիլ, սկսած է հիւծիլ, իսկ այս վարընթացը ոչինչով կը նպաստէ սփիւռքահայութեան, ա՛յն սփիւռքահայութեան, իմա՝ Տարագիր հայութեան, որ շուրջ հարիւր տարիէ ի վեր ինքզինք կը պահէ ու կը պահպանէ, որպէսզի նորօրեայ դեղնակտուցներ եւ անոնց դրածոներ զայն խամրե՞ն:

Ժողովրդային առածը կ'ըսէ. «Ծուռ նստինք, շիտակ խօսինք», բայց հիմա եղածը՝ թէ՛ ծուռ նստիլն է, թէ՛ շիտակ... չխօսիլն է, ինչո՞ւ, որովհետեւ ուղեղով, գործով, հանգամանքով ու նկարագիրով «ծուռ»երը շատցած են:

Այս մետալին միւս երեսն ալ գիտէ՞ք ո՛ր է... Հայաստան, այնքան ատեն որ կը փորձէ իր «արշին»ներով մամուլ «գնահատել», չանդրադառնալով, թէ «հոգեվարք»ներու մէջ գտնուողներու մահերգը կը շեփորէ, փոխանակ աւելի ազդու դարմանիչ միջոցներ գտնելու, առանց ինքզինք նետելու հաճոյակատարութիւններու յորձանուտին մէջ, ի հաշիւ ոմանց գոհացում տալու իր «սփիւռքասիրական» ճիգին, բայց, ինչ-որ տեղ, վարկազրկելով, վարկաբեկելով հայ մամուլը...:



Այս թոնուրոհին մէջ, ինչպէ՛ս կարելի է հայ մամուլ պահել, երբ մէկ կողմէն՝ Սփիւռքը կը թերանայ իր յանձնառութեանց մէջ, միւս կողմէն ալ՝ Հայաստանը կ'անլրջէ այս թղթածրարը:


## ՊԱՐՈՅՐ ԱՂՊԱՇԵԱՆ

Պէյրութ, Լիբանան

### «Ձեռքէ Ելած Է»

## ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Եորդոսը Կիպրոսի Նիկոսիա մայրաքաղաքի դրամատուներէն մէկուն պաշտօնեաներէն է: Ան միջին տարիքի սերունդին կը պատկանի, անոր համար գործը, արժանապատուութիւնը



եւ բարոյական արժեչափերը կարելոր գրաւականներ են իր կեանքին ու ասպարեզին համար: Տարիներու ընթացքին իմ կատարած դրամատնային գործառնութիւններու ճամբով մեր միջեւ կերտուեցաւ պաշտօնեայ-յաճախորդ յարաբերութենէն աւելի բան մը՝ բարեկամութիւն եւ հաղորդականութիւն: Նկատի ունենալով, որ Կիպրոսը միջերկրականեան երկիր մըն է, հոն կեանքի արժեչափերն ու կենցաղային հոլովոյթները շատ աւելի միջինարեւելեան են, քան՝ եւրոպական, անկախ այն իրողութենէն, որ Կիպրոս Եւրոպական միութեան անդամ է:

Եորդոսի հետ մեր բարեկամութիւնը դրսեւորուած է սուրճի գաւաթի շուրջ հանդիպումներով, որոնց ընթացքին ծանօթութիւնները առաւել եւս կ'ամրապնդուին, կարծիքներու փոխանակում կը կատարուին եւ տեսակէտներ կը ներկայացուին:

Կիպրոսը վերջին քանի մը տարիներուն կ'ապրի տնտեսական-նիւթական մեծ տագնապ մը: Մեծ է տուժածներուն թիւը, անգործներու եւ սնանկացածներու շարքը:

Եորդոս եւս երկրին մէջ ստեղծուած տնտեսական տագնապին իր «տուրքը» կը վճարէ: Ինչպէս տարբեր հաստատութիւններու մէջ աշխատողներուն պարագային, Եորդոսի ամսականը եւս նուազած է քսան առ հարիւր համեմատութեամբ: Ասիկա բնականաբար պիտի ենթադրէ, որ Եորդոսի կեանքին մէջ ալ նոր պատշաճեցումներ կատարուին: Ան կը գիտակցի այս իրականութեան, բայց եւ այնպէս կ'անդրադառնայ նաեւ, որ տնտեսական ճգնաժամին ազդեցութիւնը նաեւ պիտի հասնի կեանքի ընկերային-կենցաղային բնագաւառին, որովհետեւ այս բոլորը շաղկապուած են իրարու: Ան կը գիտակցի, որ կեանքի ամէն մէկ միաւորին ջլատումը կ'առաջնորդէ միւսին, կ'ազդէ միւսին վրայ:

Մտերմիկ հանդիպումի մը ընթացքին ուշի ուշով կ'ունկնդրէի Եորդոսի ըսածները՝ գիտնալու, թէ իբրեւ տեղացի ան ինչպէ՛ս կը վերլուծէ կացութիւնները: Ինձի համար անհրաժեշտ էր տեղական բնութագրումը՝ ընդհանուր իրավիճակին: «Մեր



քաղաքացիական, վարչական, պետական եւ հաւաքական կեանքերը մտահոգիչ իրավիճակ մը կը պարզեն», ըսաւ ան: Քիչ մը աւելի խորանալով նիւթին մէջ, ոչ շատ լաւատեսութեամբ, մտահոգ շեշտով աւելցուց. «Ձեռքէ ելած է»:

Բայց Եորդոսի համար կար աւելի կարեւոր նկատողութիւն մը՝ տագնապին եւ կացութեան նկատմամբ հաւաքական զգաստութեան անհրաժեշտութիւնը: Ան կը գիտակցի, թէ նեղութիւնը կրնայ մարդը հասունացնել, եթէ կայ սորվելու եւ զգաստանալու ցանկութիւնը: «Բայց ո՞վ եւ ինչպէ՞ս պիտի սորվին սխալներէն», հարց տուաւ ան:

Մեր բարեկամութեան բերումով ան գիտէր իմ աշխատանքս եւ հետաքրքրութիւններս. ուստի, պզտիկ ժպիտ մը ուրուագծելով իր դեմքին վրայ՝ ըսաւ. «Դուն Աստուածաշունչի մարդ ես, եւ Աստուածաշունչը յաճախ կը խօսի զգաստութեան մասին...»:

Ճիշդ էր Եորդոս, ոչ թէ որովհետեւ ես Աստուածաշունչի մարդ եմ, այլ որովհետեւ Աստուածաշունչին մէջ յաճախ կը խօսուի զգաստութեան մասին:

Թէեւ բաժնեցի անոր ըսածը, սակայն ես ինձի հարց տուի. «Արդեօք իմ՝ հայրս տագնապը այսօր տարբէ՞ր է անկէ, որ կը չարչրկէ Եորդոսը»: Արդեօք մեր հայկական տագնապները, հայրենիքի մէջ թէ սփիւռքի, անոնց պատճառով ստեղծուած կացութիւնները, անկախ խորքային տարբերութիւններէ, նաեւ կրնան կամրջուի՞լ Եորդոսի մտահոգութեան տարբերակին: Թերեւս «ձեռքէ (չ)ելա՞ծ է» կամ մեղմ ըսած՝ «ձեռքէ ելլելու վրա՞յ է»: Հապա՞հայուն զգաստութիւնը, եւ ո՞վ կամ ովքե՞ր պատրաստ են սորվելու սխալ փորձառութիւններէն, նաեւ՝ ինչպէ՞ս... Այս հարցումը կ'ողողուի հաւասարապէս Հայաստանի եւ սփիւռքի պարագային՝ զիրար հալածող եւ մէկը-միւսին վրայ կուտակուող շատ մը հիմնահարցերով...

Բայց նաեւ կ'արժէ փակագիծ մը բանալ եւ վեր առնել Աստուածաշունչին բացատրած զգաստութեան հասկացողութիւնը:

Ուրթըր Պրուկման՝ ամերիկացի ժամանակակից աստուածաբաններէն, եւ որ ճանչցուած է իր աստուածաբանական հայեացքներով, անդրադառնալով քաղաքական, տնտեսական, մշակութային եւ ընկերային ենթահողերուն եւ անոնց իրավիճակներուն՝ կը բացատրէ, թէ Քրիստոս կրցաւ աշխարհը «քակել» իր խաչելութեամբ եւ հաստատեց կեանքի եւ նոր ապագայի ուժը, որ Աստուծոյ կողմէ տրուած շնորհք է՝ ամբողջութեամբ արդիւնաւորուած Անոր յարութեամբ: Այս յարութեամբ է, որ նոր կեանք տրուեցաւ Յիսուս Քրիստոսի միջոցով: Քրիստոս քննադատեց տիրող կացութիւնը, բայց ըրաւ աւելին: Ան փոխեց նոյն կարգավիճակը իր խաչելութեամբ, նորը ստեղծեց իր յարութեամբ: Այս աստուածաբանական տեսանկիւնէն մեկնելով՝ Պրուկման կ'ընդարձակէ իր քաղաքական, ընկերային ու տնտեսական իրավիճակներու քննարկում-տեսութիւնները եւ կ'ըսէ. «Հիմնական նպատակն է կազմել հաւաքականութիւն մը եւ արթնութիւն մը, որ ոչ միայն կը քննադատէ ու կը քակէ ներկայ իրավիճակը, այլ կը փոխարինէ զայն նորով: Քակելը նպատակ չէ», կը նշէ ան: «Քակելէ ետք անհրաժեշտ է հաւաքականութիւնը վերակարգել, վերակազմաւորել, որպէսզի կարելի ըլլայ նոր մարդկութեան սկիզբը ապահովել» («Մարգարէական տեսիլքը», 2001):



Եթէ պիտի սորվինք սխալներէն, այս կը նշանակէ, թէ պէտք է ազատութիւնը ունենանք քննադատելու: Այս գծով Ճորճ Օրուէ կ'ըսէ. «Ազատութիւնը մարդոց լսել չուզածը կարենալ ըսելն է»: Բայց անհրաժեշտ է նաեւ զգաստանալը, ազատ քննադատութիւնը դրական ուժի վերածելը՝ իբրեւ նոր ապագայի կեանքի ուժ: Այս ուժով կարելի է ստեղծել նորը, նոր մարդկութեան սկզբնաւորութեան ապահովումը:

Քննադատելը միայն «քակել»-ու օգտագործելը աննպատակ եւ ապարդիւն է, եթէ չկայ փոխելու եւ վերակարգելու գայն՝ նորին հասկացողութեամբ: Այս տեսլականին մէջ է, որ պէտք է փնտռել եւ տեսնել զգաստութեան հասկացողութիւնը:

Եորդոս իր «անկիւնին» մէջ կը գիտացի, թէ անհրաժեշտ է սորվիլ անցեալի սխալներէն, բայց ան նաեւ կ'ուզէ զգաստ մնալ, որպէսզի կարելի ըլլայ նորը ստեղծել: Հայուն համահայկական ամէնէն մեծ մարտահրաւերներէն մէկը զգաստութիւնն է, հոն, ուր «ձեռքէ ելած» կամ «ձեռքէ ելլելու վրայ է» Իրավիճակը ո՛չ միայն կը քննադատուի, այլ կը փոխուի եւ կը փոխարինուի նորով: Նորը հայուն շարունակականութիւնը ապահովող գրաւականն է, որուն վրայ պէտք է հիմնել վաղուան ուժը:

## Գրական-Մշակութային

### ՔԵԶ ՀԱՄԱՐ.....

Վաղուց չեմ գրել քնքուշ բառեր... Կարծես հոգուս բոլոր ծայքերը թելադրում են ինձ հենց հիմա՝ գիշերուայ այս ուշ ժամին, կիսուել քո եթերային գոյութեան հետ, թէկուզ այդքան հեռու-հեռուից: Գիշերուայ խաւարն ինձ բերում է խորհրդաւոր բառեր, որոնք կ'ուզէի շնջալ քեզ համար այնքան նուրբ, որ ոչ ոք չկարողանար լսել...բառեր միայն քեզ համար...Ինչքան



չատ բան փոխուեց իմ մէջ, երբ կապոյտ երագների ցոլքերում եզրագծուեց քո կերպարը: Իմ հոգին դարձաւ արեւի տարողունակ, քան կար այսքան ժամանակ: Դու կաս իմ մէջ այնքան, որ երբեմն ինձ թւում է՝ մենք ձուլուած ենք մէկ էութեան մէջ, ոչ նիւթեղէն, ցնորային: Դու կարո՞ղ ես խլել բնութիւնից նրա գոյները, ծաղկից՝ նրա բոյրը, արծուից՝ նրա խրոխտ ճախրը, ժամանակից՝ նրա խելագար ընթացքը: Իհարկէ, ոչ, հազար անգամ ոչ: Այդպէս էլ չես կարող իմ էութիւնից տարանջատել ու մկրատել քեզ: Հնայիչ Սուլամիթային խենթի պէս սիրող իմ սիրելի բանաստեղծ Սեւակը կ'ասէր. <Քո անունը փշատենու փշի նման խրուել է լեզուիս վրայ ու

սրտիս մէջ>: Ես ....առանց քե՞զ...նոյնն է, թէ առանց ինձ: Այդպէս ինչպէ՞ս ապրեմ... Ամէնից շատ չեմ սիրել կեանքի կանգառները, անիմաստ, ժամանակ վատնող կանգառները: Ինչքան անյարիր են իմ էութեանը օրերի անիմաստ կորուստը, հրաշալի վայրկեանների անդառնալի վատնումը: Չզգալ հալչող օրերի մէջ քեզ, դա նոյնն է ինձ համար, ինչ չծնուելը...



Քո հեռաւոր ներկայութիւնն ինձ ստիպեց ապրել ու կեանքին նայել <քո հոգու պատուհանից>, այլ աչքերով, այլ հորիզոններից, վատի մէջ անգամ լաւը փնտռելով: Քո հոգու ներկայութիւնն ինձ աջակից է, և կարողանում եմ անուղղելի լաւատեսի նման կեանքի յորձանուտում շարունակ պայքարել ու երբեք չընկրկել, պարտութեան համը չճաշակել: Ես այնքան շատ եմ յոգնել անցեալի մշուշով պատուած պարտութիւններից: Այնպէս եմ ուզում իմ երկրորդ աստեղային ժամը յաղթական լինի, փառահեղ լինի... Բարձրութեան վրայ... Ես չեմ սիրում հողին հաւասար վիճակը, դա ոչնչացումն է, վերջն է: Որքան էլ բարդ լինի, բայց սիրում եմ, երբ <Ծառերը կանգնած են մեռնում>՝ կայծակ-փայլակից, թէ փոթորկից, ինչ կապ ունի, միեւնոյն է, բարձունքի վրայ են մեռնում, այնտեղ՝ վերելում՝ մարդկանց ճղճիմ, հաշուարկային աշխարհից վերել: Հենց այդ անարատ, մաքուր, անպարտելի բարձունքի մատոյցներին եմ ես ձգտել հասնել, բայց միայն քեզ հետ կարողացայ՝ հեռու-հեռուից, առանց նոյնիսկ ձեռքի մի փոքրիկ հպման:

Ես շատ եմ ուզում, որ մարդու մէջ արեւ լինի ու լոյս տայ՝ ջերմացնող, գգուող, ճառագող լոյս: Ուզում եմ, որ մարդիկ, իրար ուս ուսի տուած, ապրեն ու լոյս տալով հասնեն տենչանքների անհաս մատոյցներին Դու կաս, ու կարծես կեանքը դարձել է աւելի խորիմաստ: Դու՝ քո հարուստ կերպարով... դու, որ դժուարանում ես որոշել, թէ ինչ է հարկաւոր քեզ, որ հոգուդ փոթորիկը մեղմանայ, ու վերստին գտնես քո կորուսեալ անդորրը: Գուցէ մենք միայն միասին կարող ենք գտնել այդ անդորրը: Ու միայն այնժամ մեր օրը կը թեթեւանայ, երկինքն ամպերից կ'ազատուի, կեանքն էլ կը գեղեցկանայ: Միայն սերը կը փրկի մեր մոլորակը աղետներից ու բոլոր ախտածին երեւոյթներից, իսկ գիտակցուած սիրել կարող է միայն մարդ-էակը: Մեր ցանենք, որ սեր հնձենք: Սա տիեզերքի և մարդու յետադարձ կապի օրէնքն է, որ ոչ մի օրէնսգրքում չկայ: Այդ դէպքում վերափոխուած աշխարհը կը նմանուի վերջալոյսի գոյներին ու մեղմ, հանգչող իրիկնամուտի մարմրող շողերին, երբ մութը պատրաստուում է ձուլուել աշխարհին, որ սպասուող արշալոյսն աւելի պայծառ լինի:

Կարինէ Մովսիսեան

Հայաստան

## ՆՈՐ ՉԱՅՆԵՐ ՍՓԻՒՌՔԷՆ

### Մենք եւ Ծիծեռնակը

Ծիծեռնակը բոյն կը շինէ, բոյն կը շինէ ու կ'երգէ...

Ամէն անգամ նոր շինելուն, ան իր հին բոյնը կը յիշէ :

Միրելի՛ Ծիծեռնակ ,

Արդէ՞ օք Աստուծոյ գրուած ճակատագիրն է , որ գաղթող մըն ես առջաւետ, կարելի չէ՞ որ ամերիկացի ծնած ըլլայիր , որպէսզի բոլոր աշխարհի բոյները գնէիր անոր «կանաչ» ով...



Շատ ներողամիտ գտնուիր հետաքրքիր ըլլալուս, բայց ի՞նչ կը փնտռես հոս ու հոն ....ինչո՞ւ «խենթի» շապիկը հագած օտարութեան ավերուն՝ կը մաքառիս եւ ապաստան կը պահանջես ... չէ՞ որ քու հայրենիքիդ գագաթին նման բարձր գագաթ չկայ...

Վա՛յ անհանգիստ էակ....

Ծիծեռնակ, ե՞րբ պիտի խախտես գործընկերութիւնդ կլիմային հետ , չի՞ բաւեր որ ամէն անգամ թշնամիի մրրիկները՝ թրքական «քամիները», պատճառ եղած ըլլան ներքին

ցնցումներուդ եւ շատ մը բնական արկածներուդ ...

Վա՛յ գաղթաբնակ Ծիծեռնակ...

Գիտե՞ս Ծիծեռնակ, կ'ըսեն թէ ամէն ազգ ունի յատուկ իր ճանապարհը: Ուրեմն ծիծեռնակ, դուն հայ ե՞ս...չէ՛, չէ՛, դուն վստահ հայ ես: Բայց շուտ խոստովանէ աշխարհի ո՞ր անկիւնէն ես... թրքական «քամիները» քեզ ո՞ւր ...

Շատ պիտի չ'երկարեմ, Ծիծեռնակ, միայն պիտի խնդրէի , որ երթաս թոչիս ճիշդ հոն, ուր որ մերն էր՝ Կեսարիա եւ ըսես, որ իր զուակը վաղուց ի վեր արդէն ապաստանած է հիւրընկալ Սուրիոյ մեծ ընտանիքին մէջ.... Եւ աւետէ իրեն, որ հոս, օր –օրի, կը ծնին նոր Չաւուշներ եւ նոր Անդրանիկներ.... Եւ քաջ թող գիտնայ, որ մենք հոս հայու վարկը միշտ բարձր կը պահենք եւ ոչ միայն Ապրիլ 24 –ին ...

Ծիծեռնակ, նաեւ շեշտէ մեզի պէտքերուն, որ Ապրիլ 24-ը տօն չէ, ո՛չ ալ յիշատակ , այլ Ապրիլ 24 –ը մենք ենք, մեր լեզուն, մեր կենցաղն ու ապագան...



Շիժենուակ , ա՛լ պէտք է Խուսաբինք թուրքին մեզի համար մշակած «աւերակները»՝ ծրագիրները մենք իրագործելէ, եւ այս անգամ՝ անձայն ջարդով մը....բայց Հայ ըլլալդ ճակատագիր է՞ր.....

Միրով՝

Կեսարիացի Սուրիացի՝

Մեղրի Պագարեան

## ՅՈՒՇԵՐՈՒ ՇԱՐՔԷՆ

### ՏՆՕՐԷՆԻ ՅՈՒՇԵՐ

Կիպրոսի Նարեկ Հայկական Վարժարաններու տնօրէնութեանս 27 տարիները յուշերով հարուստ պահեր կը պարգևեւին ինձի, գրեթէ ամէն օր: Շատեր հաճելի, շատեր անհաճոյ եւ



սակայն նորութիւններ, միօրինականութենէ դուրս տեսակաւոր անակնկալներ, երբ գործդ երեխաներու հետ էր, գոյն եւ իմաստ կու տային մեր առօրեայ կեանքին: Անշուշտ անոնց հաճոյքը կախում կ'ունենար մեր համբերատարութեան եւ ըմբռնողութեան չափանիշներէն: Կարելորը ընդունիլն էր թէ այս բաները պիտի պատահին, որպէսզի հակազդեցութեան միջոցառումները խոտոր չհամեմատէին դաստիարակչութեան հիմունքներուն

կամ սկզբունքներուն հետ: Այս ապրումները յաճախ վերադարձած են ինձի մտերմիկ կամ երազային պահերուս ու քաղցրութեամբ օծած՝ էութիւնս, քաջ գիտնալով որ անվերադարձ են երիտասարդութեան տարիները եւ ուշ չէ նաեւ օրը, որ հաւանական դարձնէ խզումը յիշողութեանդ հետ: Յուշերու այս փունջը ընծայում մըն է բոլոր անոնց, որոնց հետ շաղուեցաւ կեանքս եւ յարգանքի տուրք մը յիշատակին բոլոր անոնց, որոնք ա՛լ չկան, անդարձ մեկնած ըլլալով այս աշխարհէն:

### ՆԱԽԱԴԱՍՈՒԹԻՒՆ

Աւարտական դասարանին կը դասաւանդէի հայերէն լեզու: Նոր բառերու իմաստը սորվելու ընկալած պարտականութիւնը կ'ըլլար այդ բառերով նախադասութիւն կազմել, բառի գործածութեան վարժութիւնը իւրացնելու համար: Տետրակները հաւաքէր էի սրբագրելու համար նման նախադասութիւններ: Նոր բառերէն մէկն ալ՝ «գառանցել» բառն էր, որուն բացատրութիւնը տուած էի որպէս «քունի մէջ խօսիլ, առանց հասկնալու խօսիլ»...





Աշակերտուհիներէն մէկը հետեւեալ նախադասութիւնը կազմած էր այդ բառով. «Պարոն Թաշճեանը, ամէն օր, հայերէնի պահուն մեզի աղուոր-աղուոր կը զառանցէ»...

#### ԱԾԱՆՑ ԲԱՌ

Ուրիշ առիթով մը քերականութեան պարտականութիւն տուած էի անոնց բառերու կազմութեան շուրջ, ինչպէս «աւոր», թագ-աւոր, լուս-աւոր, «ուրիւն» քաջ-ուրիւն, չար-ուրիւն, եւայլն: Ասոնց պէս հինգ տարբեր մասնիկներով պէտք էր երեքական բառեր կազմէին: Այդ մասնիկներէն մէկն ալ «պան» էր: Տղոցմէ մէկուն տետրակին մէջ գտայ հետեւեալ երեք օրինակները.

-Փռապան, դոնապան, Բաքորապան (անուշահոտի վաճառանիշ):

#### ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափառ հայրապետներու Նարեկ վարժարան հպարտառիթ եւ բարեբաստիկ այցելութիւնները հոգեպէս եւ բարոյապէս կը նորոգէին մեզ՝ մեր ազգային պարտականութիւններու ճամբուն վրայ: Արամ Ա. Կաթողիկոսի այցելութիւններէն մէկուն ընթացքին, դպրոցով ուղղուեցանք հանդիսասրահ, ուր իրեն ի պատիւ տեղի ունեցաւ մեծարանքի հանդիսութիւն, երգերով, արտասանութիւններով եւ ողջոյնի խօսքերով: Ամէն անգամուն ալ, հաւաքոյթի աւարտին, Վեհափառը հայրական իր պատգամը կու տար: Շատ կը սիրէր փոքրիկներուն հետ կատակել, մանկանալ, իրենց աշխարհին մէջ մտնել հարցում-պատասխանի դրութեամբ, ստեղծելով խիստ հաճելի եւ յիշատակելի մթնոլորտ մը: Կը զուարճանար փոքրիկներու անմեղունակ եւ միամիտ պատասխաններէն: Է՛, արդարօրէն դադարի մը արժանի էր պաշտօնավարութեան իր ծանր պարտաւորութիւններէն ետք: Այդ օր ալ, ըստ սովորականին ոտքի ելաւ, լաւ մը ժպտաց, շնորհակալութիւն եւ գնահատանք յայտնեց իրեն ի պատիւ սարքուած ընդունելութեան համար եւ...

-Հիմա պիտի նայիմ, որ դուք որքա՞ն լաւ կը սորվիք ձեր Հայոց Պատմութեան դասը: Քննութի՛ւն պիտի ընեմ...Հիմա ըսէք նայիմ, ո՞վ գտաւ մեր այբուբենը: Մանկապարտեզէն մինչեւ աւարտական դասարան մատ չննաց որ վեր չբարձրանար եւ դեռ մէկու մը առիթ չտուած, որ պատասխանէր, բարձրաձայն խմբերգուեցաւ.

-Մեսրո՛պ Մաշտո՛ց...

-Ապրի՛ք, բայց ո՛չ բոլորդ մէկ: Կ'ուզեմ, որ մէկ հոգի պատասխանէ միայն, եղա՞ւ: Հիմա երկրորդ հարցում մը...Ո՞վ է քաջն Վարդանը:

Մատները սկսան թռչիլ մեծ աղմուկով:

-Ե՛ս, ե՛ս, ե՛ս ըսեմ Տէր հայր, պարոն, ես...տիկին, ե՛ս, ե՛ս...

-Լաւ, լաւ մի՛ կռուիք: Դուն ըսէ նայիմ, հրահանգեց Վեհափառը, մատը ուղղելով ամենէն շատ ցատկոտող տղոցմէ մէկուն, որ Մոսկուայէն նոր եկած հայ ընտանիքի մը զաւակն էր:



-Ե՞ս:

-Այո՛, այո, դո՛ւն:

-Պարոն Թաշճեա՛նը,- գոռաց նորեկը:

Վեհափառը քահ-քահ մը արձակեց, սրահին աղմուկը խեղդելու աստիճան:

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Զբօսանքի պահուն, օր մը, աշակերտ մը տեսչարան մտաւ ճնոթկուած դէմքով, երկու ձեռքերը երեսին վրայ, զգալիօրէն ցաւերու մէջ:

Դեռ առիթը չտուած իրեն հարցնելու թէ ի՞նչ ունի.

-Ակոսա կը քաշե՞ք պարոն, շատ կը ցաւի կոր...

Տղան համոզուած ըլլալու էր, որ բոլոր հարցերը տեսչարանին մէջ կը լուծուին...

ՊԱՍՔԷԹ

Պասքէթի մրցում մը ունէինք յունական Քորնէզիոս դպրոցին դէմ, մեր դաշտին վրայ: Նարեկի խումբին մարզիչն էր յունարէն լեզուի տարիներու ուսուցիչ՝ Պարոն Ասպրիսը, որ շատ կապուած էր մեր դպրոցին:

Հակառակորդ խումբը բաւական զօրաւոր ըլլալուն, խաղի սկիզբէն սկսաւ ինքզինք պարտադրել եւ ետեւ ետեւի կողերով վայրկեանէ վայրկեան ընդլայնել կէտերու տարբերութիւնը, ի կատարութիւն՝ Ասպրիսի:

Է՛հ, թիւով անհամեմատօրէն ա՛լ աւելի մեծ դպրոցի մը խումբէն տարբեր բան ակնկալելու չէր:

Եր խումբի պատուհասը, իրենց «սքորըր»-ը՝ Միխալին էր, թիւ 12 շապիկով: Գնդակը ձեռքը անցա՛ւ, հարիւր առ հարիւր «*բանիէ*» կը նշանակէր, ինչ որ սկսաւ Պրն. Ասպրիսին արեան ճնշումը բարձրացնել, զայրոյթ տեղալով մեր խաղացողներու գլխուն վրայ, դաշտը եզերող գծի երկայնքին՝ վազվզելով, երբեմն իրեն ծանօթ հայերէն կցկտուր բառերը գործածելով, որպէսզի յոյն խաղացողները չհասկնան:

-Ձօ՛, զա՛րք, զօ՛ վո՛թքը քոթրէ, զօ՛ թիւ 12ին: Ձօ՛ Հաքո՛փ մի քինանար զօ՛, մի՛ սըքեր: Ձօ վազքէ՛ն վօտք կախէ՛ զօ՛, բերնէ զօ՛ *տօտէքան* (թիւ 12-ը), զօ՛ արո՛ւշ...

Եւ ո՞վ էր յունական խումբի թիւ 12-ը:

-Իր որդին:

ՄԱՆՏԱՐԻՆ



Դպրոցի ետեւի պարտէզը մի քանի մանտարիների ծառեր ունէինք եւ ամէն տարի պտուղները հասուննալէն ետք կը բաժնէինք աշակերտութեան, որպէսզի զբօսանքի պահուն ուտեն: Ուստի արգիլուած էր աշակերտներուն այդ ծառերուն մօտենալ եւ փորձութեան մատնուիլ...Պիտի ուտէին, երբ ատենը գար....

Առտու մըն ալ դպրոց եկանք եւ ի՛նչ տեսնենք: Լաւ ծառերէն մէկուն վրայ գրեթէ մանտարին չէ մնացած, միայն գագաթը քանի մը հատ՝ նմոյշի համար, այդ ալ եթէ հասնիս:

Քննութիւնը ցոյց տուաւ որ աշակերտի գործ չէ: Դուրսէն գողեր եկած էին իրենց ախորժակը գոհացնելու, եթէ ոչ....գրպանը....

Կէսօրուան մօտ գրասենեակս աշխատած պահուն, քարտուղարի բացակայութեան, դուռս բաց գտնելով, ներս մտաւ անծանօթ մարդ մը՝ յոյն, երկու ձեռքերուն մէկական նայլոնէ տոպրակ՝ մէջը լեցուն մանտարին:

-Ի՞նչ կ'ուզէք, ըսի յունարէնով:

-Թարմ մանտարին կը ծախեմ, ըսաւ, կէս գին, կ'ուզե՞ք:

-Ուրկէ՞ են այս մանտարիները:

-Մեր տան պարտէզէն....

Ոտքի ելայ, մօտեցայ մարդուն, աչքերուն լաւ մը նայելով, հատ մը առի տոպրակին մէջէն: Պտուղին գոյնը, տեսակը, չափը ստուգելէն եւ իր տարօրինակ նայուածքէն հասկցայ որ գողը ինքն է:

Եկեր էր մեր ապրանքը մեզի ծախելու....Ի՛նչ համարձակութիւն:

ՀԱՅՐԵՆԻ ՀԻԻՐԵՐ

Կէսօրուան մօտ, մայր մուտքի միջանցքէն աղմուկ մը լսուեցաւ:

Քարտուղարուհին վազեց վար, հասկնալու համար պատճառը եւ քանի մը վայրկեան ետք վերադարձաւ լուր տալու, որ հայրենի զբօսաշրջիկներու խումբ մը ժամանած է:

Վար իջայ, ի՛նչ տեսնեմ: Խումբի անդամները ցիր ու ցան, ամէն մէկը իր լուսանկարչական գործիքը ձեռքին, դպրոցի տարբեր անկիւնները նկարելու վրայ եւ քիչ մը անդին՝ իրենց մեծ օթօպիւսը դպրոցի մայր մուտքին առջեւ՝ սպասողական վիճակի մէջ:

Անոնցմէ մին մօտեցաւ ինծի ըսելու, որ Մելգոնեան այցելած են եւ դէպի քաղաքի կեդրոնը զացող ճամբուն վրայ նշմարելով մեր եկեղեցիին գմբէթը եւ դպրոցի ճակատին հայկական տառերը, կեցնել տուած են ինքնաշարժը իրենց հետաքրքրութիւնը գոհացնելու համար:

-Բարո՛վ, հազա՛ր բարով եկաք, հայրենի հիւրեր, ըսի բարձրաձայն:

Գլուխները իմ կողմս դարձան եւ կամաց-կամաց զանգակը լսած աշակերտներու պէս սկսան ինծի մօտենալ:



-Այս ի՛նչ հաճելի անակնկալ ըրիք մեզի: Ուրկէ՛ ուր: Ձեզ տեսնելով հայրենիքը տեսած կ'ըլլամ: Որքա՛ն պիտի փափաքէի մէկ առ մէկ ողջագուրուիլ ձեզի հետ, բայց ժամանակ պիտի առնէ: Ուրեմն թոյլ տուէք որ ձեր մեջէն մէկ հոգի համբուրեմ եւ սեպեցէք թէ բոլորդ համբուրած կ'ըլլամ:

Ճիշդ առջեւ կեցած առաջին տիկինը առի ձեռքերուս մէջ եւ եղբայրական ողջագուրումով մը փորձեցի հարազատ զգացումներու թարգման հանդիսանալ:

-Էլի եղ իմ տիկինն էք համբուրում աղբեր ջան: Թոյլ տուէք եւ էլ ձեր տիկինը համբուրեմ: Ու՞ր է նա: Հոս կը լինի՞:

-Իմ տիկինը Կիպրոսի ռատիոկայանն է: Գացէ՛ք եւ ոչ թէ մէկ այլ երկու անգամ համբուրեցէք,-ըսի:

Խնդացինք:

Մարդուն անունն էր Արամայիս Սահակեան:

Բարձրացանք հանդիսասրահ, աշակերտ-ուսուցիչ շուտով հաւաքուեցանք եւ կէս ժամէն աւելի լրիւ վայելեցինք Արամայիս Սահակեանը իր արտասանութիւններով, զուարճախօսութիւններով եւ պատգամով:

Աշակերտներուն ցնծութիւնը եւ մեծերուս յուզումը միաձուլուեցան հաճելի այս անակնկալին առջեւ:

(Շարունակելի)